

նու երկիրը , այլ նաև Վորէա , Վո-
լինչին և ուրիշ տեղուանք :

Այս փիլիսոփային խելացի առածնե-
րէն մէկ քանին ասոնք են .

“ Եայէ որ խոստմունքդ արդար ըլ-
լայ . վասն զի խոստանալէն ետքը՝ կա-
տարելու է :

“ Նարանութիւնն ու փառքը բարիք
են , անոնց փափաքին ալ բնական բան
է . բայց երբոր աս բարիքը առաքինու-
թեան հետ չեն միաբանիր , խելացի
մարդը զանոնք պիտի արհամարհէ ու
մէկդի ձգէ վեհանձնութեամք : Այդքա-
տութիւնն ու տգիտութիւնը չարիք են ,
անոնցմէ փախչին ալ բնական է . երբ-
որ խելացի մարդը ասոնց մէջ ինայ ,
կրնայ աշխատիլ որ ազատի ասոնցմէ ,
բայց առանց յանցանք մը գործելու :

“ Խրբոր մէկը քեզմէ լաւ մարդ չէ ,
հետը բարեկամութեամք մի կապուիր :

“ Այսէկ մեռնիլ կ'ուզես նէ , առաջ
աղէկ ապրիլ սորպէ :

“ Բարեաց փոխարէն բարիք ըրէ .
բայց չարեաց փոխարէն չարիք ոչ եր-
բէք :

“ Խրբոր հայրենեացդ մէջ առաքի-
նութիւնը հալածուած ու մոլութիւնը
տիրած է , ձգէ ելիր հայրենիքէդ . բայց
թէ որ գնացած տեղդ քու հայրենեացդ
պակասութիւնները պիտի տանիս , թը-
շուառ երկրիդ մէջ մնա . դուրս երթա-
լէդ ի՞նչ օգուտ :

“ Դամրութիւնը իմաստութեն կե-
ղեն է , բայց անով կը պահուի իմաս-
տութիւնը , :

ԱԶԳԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարաշու Հանդին Դատաստանագիրնեւ :

ՀաՅԱՍՏԱՆ լրագրոյն 63 թիւը , որ
ազգային լրոց մէջ Վարաշ քաղքին
վանքը Եղած Վիխթար Գաօշի դատաս-
տանագրոց վրայ տեղեկութիւն մը և
ինդիր մը կուտայ , ձեռուընիս հասաւ
այն ժամը՝ երբ մենք ալ նոյն դատա-

տանագրոց հեղինակին և իր իսկագիր
առջի օրինակին վրայ . կը խօսէինք մեր
Ճեմարանին մէջ . կարդացինք Հայաս-
տանին տուած տեղեկութիւնն ալ , շը-
նորհակալ Եղանք անոնց որ կերպով մը
մեզի իմացուցին մեր սուրբ և անմահ
ամբրոնացւոյն մէկ աշխատանքն ալ ,
և կը փութանք այն տեղեկութիւնը
հրատարակողին քանի մը տարակոյսնե-
րը լուծելու , և իմացընելու թէ ինչէն
ամբրոնացւոյն և Գաօշին գործքերը
իրարու հետ շիտթեր են .

Վըդ նախ աս կ'ըսենք որ Ա ամբրո-
նացւոյն և Վիխթարայ աշխատութիւն-
ները զատ զատ գործքեր են . առջինի-
նը թարգմանութիւն է , երկրորդինը
հեղինակաբար գրուած է . Ա ամբրոնա-
ցւոյնը՝ (Ա էնոդրութիւնն կամ (Ա էնաց
գիր է , ինչպէս որ ինքն ալ միշտ կ'ա-
նուանէ իր թարգմանութիւնը այն
հրատարակուած յառաջաբանութեան
մէջ . “ Օ այս ծայրագաղ օրինադրու-
թիւնն տառապեալ եսլիսկոպոս
“ Տարանի թարգմանեցի . . . Գոյր
“ առ ինքն այս համառօտ քաղաքական
օրինադրութիւնն առաջարկուած
մանութիւն օրինացր “ և այն . իսկ
Վիխթար Գաօշին շինածը թէպէտ և
նոյն կամ նման է նիւթը , բայց միշտ
Դատաստանաց գիր կամ Դատաստանա-
ցիր կ'ըսուի . ինչպէս նոյն օրագրին
մէջ բերուած վերջի հատուածը կ'իմա-
ցընէ , որ է բուն Վիխթարայ Գաօշին
խօսքը որ կ'ըսէ . “ Ա նախագրութիւն
“ Գրոյս դատաստանի . . . Հիւսել զիրս
“ դատաստանի . . . Փոխել զիրս դատաս-
“ դատանի . . . ”

Վս երկու գրուածքը , և այն հրա-
տարակեալ երկու յառաջաբանութիւն-
ները տարբեր հեղինակէ և ժամանակէ
գրուած ըլլալն ալ յայտնի է նոյն տեղը ,
որովհետեւ Ա ամբրոնացին յայտնի կ'ի-
մացընէ որ օրինադրութեանց համար
ինսդիրը Եղաւ Ունի թուին (1193) և
ինքը թարգմանեց Ունեն (1196 կամ
ասոր մօտ տարի մը). իսկ ետքի յառա-
ջաբանը , որ է Վիխթարայ , կ'ըսէ թէ
Ունի թուին (1184) ձեռք զարկինք աս

գործքին . և ինչպէս լաւ գիտենք , և օ-
րագիրն ալ առաջուց կը ծանուցանէ՝
նոյն թուոյն մէջ լըմնցած էր ՚ Դատաս-
տանագիրքը :

՚ Դարձեալ , այդ երկու յառաջաբա-
նութիւնները՝ իրենց գրքին անուննէն և
թուականնէն զատ ուրիշ հակասութի-
ներ ալ ունին . զոր օրինակ առջինը
(՚ ամբոնացին) պանծալով մը իր աշ-
խարհին և թագաւորութեանը՝ փա-
ռացը վրայ կ'ըսէ . “ ՚ Որագաւորի ՚ էո-
նի ձեռն որ ’ի ՚ ի ՚ լիւլիկեայս և ՚ սո-
րոց գաւառացն տիրէ . . . իսկ վեր-
ջինը (՚ աօշ) կ'ըսէ . “ ՚ Յամն (և ոչ
՚ յայսն) անիշխանութեան թագաւո-
րութեան մերոյ , : ՚ Սիրկայ կը յիշէ
որ ՚ լիւլիկիոյ մեծ ՚ շխանին ՚ յուրենին
ատենը կը գրէր , իսկ անիկայ՝ ՚ և ոնին .
՚ ամբոնացին ՚ ուլուայ ամրոցին մէջ
աշխատեր է , իսկ ՚ խիթար ոչ ՚ Դետ-
կայ վանքը՝ որ գեռ չէր շնած , հապա
՚ Դասնոյ (և ոչ ՚ բանոյ) անապատ ը-
սուած վանքը , որ ՚ Դանճակայ մօտերը
պիտի ինկնայ , թէպէտ անծանօթ է
տեղը : ՚ Խիթար ՚ աօշ կ'ըսէ . “ ՚ Եւ ’ի
՚ դիտապետութեանն տեառն ՚ տե-
՚ փաննոսի տանս (և ոչ ՚ բանոյ) ՚ յուրա-
՚ նից . . . իսկ ՚ ամբոնացին ոչ ՚ յուրա-
՚ նից տանը ՚ ետ բան ունէր , և ոչ ալ
՚ հարկ ունէր անոր դիտապետը յիշելու .
այսպէս ալ ՚ յայենոյ ՚ շխանները ՚ իրեն
՚ ետ ծանօթութիւն մը չունէին :

՚ Կրեմն ինչէն է աս շփոթութիւնս :
՚ Որացու վանքին ձեռագրին պակսու-
թենէն , թէ որ (ինչպէս լրագրին ՚ իրա-
ւասէր ՚ հրատարակողն ալ կ'ըսէ) ՚ հաւա-
տարիմէ այն յառաջաբաններն օրինա-
կողը : ՚ Մոտոր պակսութիւնը երկու տե-
սակ կ'երենայ . մէկրքիչ մը ընդհանուր՝
ուրիշ օրինագրութեանց և դատաստա-
նագրոց օրինակներուն ալ տրուած , մէ-
կալը մասնաւոր՝ նոյն ձեռագրին : ՚ Ռջի
պակասութիւնը աս է որ ատ գրքերը
շատ ՚ եղ մէկտեղ կ'օրինակուին և մէկ
մարդու գործ կը կարծուին . ահա այս-

1 թէպէտ ՚ և ուն գեռ չէր օծուած թագաւոր ,
բայց երբեմն թագաւոր ալ կ'անուանէր այն տա-
րիները :

պէս երբ ՚ հմա ՚ խիթարայ գրուածքը
աւելի ՚ ամբոնացւոյն ընծայուած կ'ե-
րենայ , ՚ ոս ատեն մը կարծիք եղած էր
թէ (՚ ըինագրութիւններն ալ ՚ խի-
թար ՚ աօշ ՚ թարգմանած ըլլայ : ՚ Եր
ունեցած օրինակներուն մէջ ալ ոմանք
աս երկու գործքերը մէկտեղ ՚ խառնած
են , ՚ արացու վանքինն ալ անամնկ պի-
տի ըլլայ , և մէկ ՚ հաւաքումն ըրած բո-
լոր օրինաց և դատաստանաց վերաբե-
րեալ գրուածքներու . ուր յառաջաբա-
նութիւնները , գլխակարգութիւնները
և քանի մը գլուխ՝ մէջէ մէջ անցուցած
կամ ետև առաջ գրուած են : ՚ խի-
թար ՚ աօշին գրածն է տանըմէկ գլուխ
յառաջաբանութիւն , որուն ետքի գը-
լուխն է ՚ չիշատակարան մը , և անկից է
՚ հայաստանին բերած վերջի հատուա-
ծը . և յիշած խոնարհական խօսքերը
՚ ամբոնացւոյնը չեն , ՚ հապա ՚ աօշին
են , որ անոնց ՚ ետքանի մը կլոր խօսքե-
րով ալ ՚ չմարտապէս կը յանդիմանէ
մեր ազգին մէկ պակսութիւնը , որ է
առանց շտկելու սիսալը՝ մեղաղբել . աս
տանըմէկ գլխէն զատ 251 գլուխ՝ է իր
՚ Դատաստանաց գիրքը կամ կանոնները ,
որոնց ցանկն ալ ՚ ինքը շնած է : ՚ Իսկ
՚ ամբոնացւոյն ՚ թարգմանութիւնն է ,
՚ նախ՝ ՚ կոստանդնի , ՚ թէկողոսի և ՚ և ո-
նի անունով յիշուած օրէնքներ , որոնք
՚ օւստինիանոս ալ ՚ հաստատած է , և
աս է 152 գլուխ բան . ը , ՚ յն օրէնք-
ներուն ՚ համառօտ բովանդակութիւնն՝
85 գլուխ բան . ՚ կ , ՚ և ոնի և ՚ կոստան-
դեայ կայսերաց ՚ քաղաքական օրէնք-
ներէն ընտրած և ՚ համառօտած կանոն-
ներ . աս գրուածքիս մասերը ՚ իտլու
կ'ըսուին յոյն բառով , որ ՚ վերնագիր կմ-
մականուն ըսել է , և ամէն մէկ տիտ-
լոս զանազան գլուխներ , կարգեր , ՚ հրա-
մաններ կը բաժնուի . դարձեալ քանի
մը տիտլոս մէկտեղ մէկ գիրք մը կը կո-
չուի . ՚ ամբոնացին կ'երենայ ՚ թէ կար-

1 Աս գլուխները սովորական գրոց գլուխնե-
րուն պէս ՚ հաւասար չափով չեն , ՚ հապա ՚ այնչափ
կտոր բան կամ այնչափ ՚ նիւթ ըսել է . որոնցմէ
ոմանք ՚ իրեք չորս տող են , ոմանք ՚ իրեք չորս
թուղթ :

գաւ 49 տիտղոսէ քաղեր է . և ամբնցմէ դուրս գալրձեալ թէ նոյն տիտղոսներէն՝ թէ ուրիշ տիտղոսներէն զանազան հատուածներ ալ թարգմաններ է . դ , ՚ նոյն զրուածքէն կամ թէ ուրիշ գրուածքէ թարգմաններ է ՚ Յուստինիանոս կայսեր և ՚ յուինէ թագուհւոյն օրէնքներէն ալ . ե , ՚ օխնուորաց օրէնքը կամ ՚ աշմանագրութիւնը , 56 գլուխ բան , որ նոյն ՚ աղաքական օրինաց գրքէն է . դ , ՚ աշուխի օրէնքները , որ յունարէն զատ հաւաքմունք եղած ըլլալով՝ ՚ ամբունացին ալ զատ թարգմաններ է : ՚ ս բոլոր գործքերը մէկտեղ ՚ խիթարայ ՚ յօշի գրուածքին կէսէն քիչ մը աւելի են :

՚ երցիշեալ զանազան տիտղոսի հատուածներէն է այն իրեք հատուածն ալ՝ որ ՚ արաշու ձեռագրին օրինակողը՝ ՚ ամբոնացւոյն երկու յիշատակարաններուն մէջը ձգեր է , առանց գլխակար գութիւններն ալ զատելու , որ ասոնք են . ՚ ամս արդարութեան օրինացն . յառաջին և յերկրորդ տիտղոսէն , և յառաջին գրոց . — ՚ ամս արդարութեան աստուածայնոյն և մարդկայնոյն . — ՚ ամս բնութեան օրինաց հեթանո-

սաց քաղաքականաց . յա . տիտղոսէն և յը գրոց . . : ՚ ս հատուածներէն վերջը կուգան զինուորական օրէնքները :

՚ յըկրորդ պակասութիւնը որ ՚ արաշու օրինակին յատուկ է ըսինք , է իրեն սիսալագրութիւնը , որ խիստ շատ է . և թէ որ բոլոր գիրքն ալ աս խըրկուած հատուածներուն պէս զրուածէ՝ լաբիւրինթոսի մը կամ խորտութորտ գաշտի մը պիտինմանի . զոր օրինակ , հոս վերջի յիշած տիտղոսին զլիսագիրը , որ է . ՚ ամս բնութեան օրինաց հեթանոսաց քաղաքականաց . . , ըստ ձեռագրաց աւբինաց գրուած ըլլալուն՝ դիւրաւ սիսալեր և առանց կարգացեր է ՚ արաշու ձեռագիրը . ասոր նմանն նոյն իրեք հատուածներուն մէջ լեցուն սիսալ ըլլալը՝ զանոնք կարգացողը շատ տեղ բան ըրհասկընալէն ալ կ'իմանայ : ՚ յողունք անոնք ու միայն ՚ խիթար ՚ յօշին յիշատակարանին հատուածը , որ վերն ալ յիշեցինք . ամբողջ հոս օրինակինք , թէ ՚ արաշու օրինակէն և թէ մեր օրինակէն՝ որուն անսխալութեան մեծ և փառաւոր ապացոյցը վերջը պիտի յայտնենք . թող որ անոր համաձայն ուրիշ օրինակներ ալ ունինք :

՚ արաշու զանազան օրինակը :

՚ եռնարկութիւն մեզ այսմ իրողութեան եղեւ ՚ ի լուսէն ՚ այոց ՈԼԳ , և շրջանին երթալոց ՚ ի բաց ժԱ , որ կոչի փոքր . իսկ ՚ ուոմին՝ ՚ նե . յայսմ անիշխանութեան թագաւորութեան մերոյ ՚ ի վաղընջուց ժամանակէ մնացելոց սակաւ իշխանաց՝ ՚ ի կողմանս ՚ յաշենոյ ընդ ժամանակս անուանելոյ ՚ ասանայ կրօնաւորեցելոյ , և որդւոյն նորա ՚ աղտանազւոյ ՚ ի դղեկի որ անուանի ՚ այթելք , գլխաւորի այլոց իշխանաց և կողմանյն ՚ ի դղեկի այլոց իշխանին ՚ յուրէնի . յամի յորում մեռաւ յաղթող թագաւորն ՚ լ ըաց ՚ յորգի , ՚ ի հայրապետութեան տեառն ՚ յորիգորի ՚ այոց մեծաց , և դիտապետութեան տեառն ՚ տեփաննոսի տանն ՚ լ ըուանից յ ՚ շարհին ՚ բանայ ՚ ի նահանգիս որ կոչի

՚ եր օրինակը :

՚ այս ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ՚ ի թուականութեն ՚ այոց ՈԼԳ , և շրջանին երթալոց ՚ ի բաց ժԱ , որ կոչի փոքր . իսկ ՚ ուոմին՝ ՚ նե . յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ , ՚ ի վաղընջուց ՚ ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ՚ ի կողմանս ՚ յաշենոյ . ընդ ժամանակս անուանելոյ ՚ ասանայ որդւոյ ՚ ախտանկայ կրօնաւորեցելոյ , և որդւոյ նորա վախտանկայ , ՚ ի դղեկին որ անուանեալ կոչի ՚ աթելք , գլխաւորի այլոց իշխանացն : ՚ յու կողմանյն ՚ ի դղեկի այլոց իշխանին ՚ յուրէնի . յամի յորում մեռաւ յաղթող թագաւորն ՚ լ ըաց ՚ յուրգի . ՚ ի հայրապետութեան տեառն ՚ յորիգորի ՚ այոց մեծաց , և ՚ ի դիտապետութեանն տեառն ՚ տեփաննոսի տանն

մայրաքաղաքին Կանձակ, յանապատ և յեղբայրանոցս անուանեալ Կամոյ, սկզբնաւորեալ՝ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց հուսանացն յիշլոյ, ձեռնտուութեամբ Հօր Յովսեփայ և եղբօր Պօղոսի յորդորմամբ՝ ի յառաջարկութիւնս : Ծայց գծագրութիւն յիշատակիս՝ ի նախարարութիւնս զրոց դատաստանի եղեւ . զի կատարած սորա՝ ի ձեռն մեր միանգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն : Եւ արդ որքան է կար՝ ի գործ արհանեն հիւսել զկնի զիրս դատաստանի, ընդ որս զայս ևս մաղթեմք, որ նէ պատահի և հաճոյ ոմանց թուի յօրինակէ աստի փոխել զիրս դատաստանի, ընդ նմին փոխեսցիք և զյիշատակս զայս յիշատակել սքօք զմեզ, որովք համօրէն յիշեալ լինիք՝ ի Վրիստոս Յիսուս՝ ի տէր մեր :

Դուանից յաշխարհիս Առանայ, 'ի նահանդիս՝ որ կոչի մայրաքաղաքին Կամնակայ, յանապատ և յեղբայրանոցս անուանեալ Կամոյ . օկզբնաւորեալ՝ ի լեռնակողմն մենաստանին կոչելոյ Հռոմաշէն . ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնատուութեամբ Հօր Յովսեփայ և եղբօր Պաւղոսի յորդորմամբ յառաջարկութիւն յիշատակիս՝ ի նախագրութիւն զրոցս Ծայց գծագրութիւն յիշատակիս՝ ի նախագրութիւն զրոցս Պատաստանի եղեւ . զի կատարած սորա՝ ի ձեռն մեր մի անգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն : Եւ արդ որքան է կար, անկանիմք հիւսել զկնի զիրս դատաստանի . ընդ որս և զայս ևս մաղթեմք, եթէ պատահի և հաճոյ ոմանց թուի յօրինակէ աստի փոխել զիրս դատաստանի, ընդ նմին փոխեսցիք և զյիշատակս զայսորիկ, յիշատակել սքօք զմեզ, որով և դուք համօրէն յիշեալ լինիք՝ ի Վրիստոս Յիսուս՝ ի տէր մեր . որում փառք յաւիտեանս . ամէն :

Այս հատուածիս միջի անգատեհ սխալներուն մէկքանին վերը յիշեցինք . երկուք մ'ալ հոս . մէկը ժԱ թուականն է որ ՃԱ պիտի ըլլայ, որովհետեւ այն շրջանը որ կը յիշէ ՈՒխիթար և խոր կ'անուանէ՝ մենք նէծ կ'անուանենք կամ՝ Կիոնիսեան, որ է 532 տարուան անուանի շրջանը, և մեր Հայութուականին հետ սկսուած ըլլալով՝ մէկ անգամ լըմնցած և երկրորդ անգամ սկսած ու 101 տարին հասեր էր մեր ՈՒԳ թուին աստենը (1184), ան տարին որ ՈՒխիթար զաս կը գրէր : ՈՒէկալ սխալն է կուսանաց, որ կուսափանաց պիտի ըլլայ, որովհետեւ այն յիշեալ Կապատը և Կաղբայրանոցը կ'իմանայ :

Վայսափ սխալներ՝ որ ստոյգ օրինակներով իմանալը դիւրին է, մեզի աս կը սորվեցընեն, թէ ստոյգ օրինակ չունինք նէ՝ դիւրաւ կրնանք խաբուիլ, և թէ պէտք է տարակուսինք ան բաներուն վրայ՝ որ միայն մէկ և մանաւանդ ասանկ տկալը օրինակէ մը կը հրատարակուին . անոր համար մենք ալպէտք

է քիչ մըն ալ այն Ամերոնացւոյն երկու յիշատակարաններուն վրայ տարակուսինք, որովհետեւ այս առջի անգամն է որ կը կարդանք զանոնք և անանկ օրինակի մէջ . մանաւանդ երկրորդ հատուածին մէջ մեզի քիչ մը անհարազատութիւններ կ'երեւան : ՈՒիայն թուականները յիշենք որ պատմութեան չեն յարմարիր . զոր օրինակ կ'ըսէ . “ Ի թուին ՈՒԲ (1193)՝ ժԱ ամի նորին հայրապետութեան . . . այս հայրապետը թէ որ Վրիգոր Տղայն է (ինչպէս որ կ'երեւցընէ Ամերոնացին՝ զինքը անոր չեւանասուն որդի կոչելով, որովհետեւ անկէ ձեռնադրուեցաւ եսպիսկոպոս), Վրիգոր Տղայ՝ ՈՒՍ (1192) թուին մեռեր էր, և այն թիւը իրեն իշխանութեան քսաներորդ տարին էր . բայց ՈՒԲ թուին կաթուղիկոս էր դրժքաղդ Վրիգոր Վահավեժը՝ որ հազիւտարի ու կէս նստաւ աթոռը . իսկ ՈՒԵ (1196) թուին՝ որ Ամերոնացին ըրաւեր թարգմանութիւնը, Վրիգոր Վահավատն էր կաթուղիկոս, որուն իշխա-

նութեան չորրորդ տարին վախճանեցաւ | ամբոնացին. զայս կաթուղիկոսը կը յիշէ | ամբոնացին իր թղթին մէջ որ գրեց առ | և ոն թագաւոր ՈԽԵն (196), և անոր մէջ կը յիշէ Պարիգոր Տղային մահն ալ : Արդ աս բաներս կը ցուցընեն որ յայտնի սխալ կայ այդ յիշատակարանին մէջ :

Հայաստան լրագրին բարեսէր և ըզգուշաւոր հրատարակողին խնդիրը լուծելին վերջը՝ այս սխաներուն յիշատակութեան պատճառը մէջմը կարդացողներն ալ չարիստիքը համար է, մէկ մ'ալ թէ այն հրատարակողին և թէ մեր վախը յայտնելու համար՝ որ չըլլայ թէ ասանկ սխալ բաներ տարածուին աղգերնուս մէջ . որովհետեւ հիմայ շատ տեղ կը լսենք որ ընկերութիւններ հաստատուած են որ կամ կը փափագին, կամ կը խոստանան նախնեաց գրքեր տպելու և հրատարակելու . շատ լաւ կամք է աս և շատ գովելի, միայն թէ աղգին օգուտը միանգամայն ընտիր և ստոյդ ընթերցուածներ կը պահանջէ . անոր համար կ'աղաջենք որ այդ խոստացուած գրքերուն հարազատութեանը և ընտրութելը վրայ ալ զմեզ ապահով ընեն, և քանի որ յայտնապէս ընտիր կամ անախալ չէ օրինակնին՝ ջանան ուրիշ ալ գտնել և բաղդատել : Այս խրատը շատ խելքով կուտայ վերոյիշեալ լրագրին հրատարակիչը իր մէկ թերթին մէջ՝ մէկ վանքի մը, որ տպագրարան ունենալին առաջ՝ ջանայ լաւ և տպելու արժանի գրքեր ստանալու : Խսկ այն գըրքերն որ ընտրութեամբ և բաղդատութեամբ տպուած են, և բաւական վըկայեալ օրինակներէ, պէտք է որ պատկառելի ըլլան կարդացողներուն, և ձեռագրի մը մէջ տարբերութիւն մը տեսածնուն պէս՝ չկասկածին, չտարակուսին, չհամարձակին սխալ կոչելու և սրբագրելու, ինչպէս Առկաս լրագրին մէջ անցեալ տարի բանասիրին մէկն ըրեր էր . աղգիս գալրութեան ախորժակը կը հիմայ բացուելու վրայ է, բայց թէ որ մէկէն իր գեռ տկար քայլերուն օգնական ցուպը թողու՝ ու դատողական

գաւազանը ձեռք առնէ, բաներնիս գէշէ : Վազ չենք ուզեր ամենեւին որ արգելք մը ըլլայ, այլ մանաւանդ կը փափագինք, և կը խնդրենք՝ որ նոր նոր յայտնուած ձեռագրաց վրայ ծանօթութիւններ տրուին, որ ամէնքն ալ նոր լրսեր առնեն, ինչպէս ահա մենք իմացանք անխոնջ | ամբոնացւոյն մէկ աշխատասիրութիւնն ալ : Վենք ալ հոս աւետիս միայն տալով՝ ուրիշ անգամուան կը թողունք տեղն 'ի տեղը ծանուցանելը՝ որ Վիսիթար Գաօշի բուն իրեն ձեռքովը առջի գրած դատաստանագիրքը՝ մեր քոմիւն է :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ Գ

Դ'արդարութիւն :

Դ'արտարութիւն կ'ըսուի ինչ և իցէ կերպով բերք հանելը, որուն հասպէլ ալ կ'ըսենք : Իրեք տեսակ ձարտարութիւն կայ նոր բերք հանելու կամ հաստելու համար . որ են մշակական, ձեռագործական և տուրեաուիկ ձարտարութիւն : Վշական ճարդարութիւն՝ տակ կ'իյնան՝ երկիրս բանեցընելով անկից ելած ամենայն բերքերը : Ձեռագործական ճարդարութիւն՝ տակ կ'իյնան որ և իցէ արուեստով շինած բաները : Տնտեսական ճարդարութիւն՝ կ'ըսուի որ և իցէ բերք տեղէ տեղ տանիլը : — Վսիրեք տեսակ ձարտարութեամբ է որ թագաւորութիւններ կը դառնան, ժողովուրդներ կ'ապրին, և ծովուն ուցամքին վրայ մարդուս գործունէութիւնը կը տեսնուի, և անոնց առաջ

1 Industrie.

2 Produire բառին յարմար կուգայ. հասպէլուստիքի production բառն ալ կ'ինայ ըսուիլ հասպէլուն . իսկ պրոդուկտը կ'էր կամ հասպէլուն :

3 Industrie agricole.

4 Industrie manifaturière.

5 Industrie commerciale.